Ֆելիքս Մովսիսյան

ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քաղաքականության մեջ ոչինչ պատահական տեղի չի ունենում: Եթե որևէ բան է կատարվել, ապա դա նախապես ծրագրված է եղել[1]:

Ֆրանկլին Դելանո Ռուզվելտ[2]

Բանալի բառեր- «Անգլիայի Մեծ Օթյակ», մասոն, իլյումինատ, «Ֆրանսիայի Մեծ Արևելք», «Սև ձեռք» օթյակ, Ազգերի լիգա:

Առաջին համաշխարհային պատերազմը պատմական ու քաղաքական գրականությունում ամենից շատ քննարկվող հարցերից մեկն է, որի մասին անցած հարյուր տարվա ընթացքում հրատարակված մեծ քանակությամբ հետաքրքիր ու արժեքավոր մենագրությունների և ուսումնասիրությունների թվում անգլիական պատմաբան Հարրի Հեդերի կարծիքով «որևէ լեզվով չկա մի գիրք, որը բացահայտի պատերազմի պատճառները»[3]: Անդրադառնալով Առաջին աշխարհամարտի բռնկման պատճառներին՝ ԱՄՆ նախագահ, համաշխարհային քաղաքականությունում ընթացող գաղտնագործունեության գիտակ Վուդրո Վիլսոնը[4] նշում էր. «Բոլորը փնտրում և չեն գտնում այն պատճառը, որի համար սկսվեց պատերազմը: Նրանց փնտրտուքն ապարդյուն է, դրա պատճառը նրանք չեն բացահայտի: Պատերազմն սկսվեց ոչ թե մեկ կոնկրետ պատճառով, պատերազմն սկսվեց բոլոր պատճառներով հանդերձ»[5]:

Արևմտյան պատմական գրականությունում տարածում գտած դավադրության տեսության համաձայն՝ աշխարհամարտ սկսելու հարցը որոշվել և իրականացվել է համաշխարհային մասոնության ու սիոնության ակունքներում, որոնք նախապես բաշխել էին քաղաքական բոլոր դերերը: Համաշխարհային մասոնությունը նպատակ էր հետապնդում կայսրությունների տապալման արդյունքում ձևավորել համաշխարհային անտեսանելի կառավարություն, ստեղծել մասոնական գերտերություն և հաստատել նոր համաշխարհային կարգ: Համաշխարհային հրեությունը, սերտորեն համագործակցած եվրոպական մի շարք երկրների մասոնական կառավարությունների, մեծ օթյակների և ֆինանսական հզոր օլիգարխների հետ, ձգտում էր պատերազմը ծառայեցնել իր ազգային շահերին և լուծել երկու հիմնական խնդիր՝ Պաղեստինի տարածքում ստեղծել հրեական ազգային օջախ և նպաստել Ռուսական կայսրության կործանմանը:

Այս միտքը հիմնավորելու համար դավադրության տեսության կողմնակիցները բերում են տասնյակ փաստեր, որոնք վկայում են այն մասին, որ Առաջին աշխարհամարտից տարիներ առաջ եվրոպական բազմաթիվ երևելի մասոններ կանխատեսում էին պատերազմի անխուսափելիությունը: Նրանցից «Անգլիայի Մեծ Օթյակի» անդամ Հենրի դյու Պրե Լաբուշերը[6] Առաջին աշխարհամարտից 14 տարի առաջ «Ճշմարտություն» հանդեսում 1890 թ. դեկտեմբերին տպագրած «Կայզերի երա-

---

[1] https://ru.m.wikiquote.org/wiki/Франклин Рузвелт.

[2] Ֆրանկլին Դելանո Ռուզվելտ (1882-1945), ԱՄՆ 32-րդ նախագահ, Շոտլանդական կանոնակարգի 32-րդ աստիճանի մասոն, ժակ դրե Մոլե Օրդենի առաջին Պատվավոր Մեծ Վարպետ:

[3] Տե՛ս Գարրի Хедер, Предисловие редактора к книге Джеймса Джолла «Истоки Первой мировой войны», Пер. с англ., Ростов на Дону, 1984, с. 3.

[4] Վուդրո Վիլսոնի նախագահական գործունեությունն անխզելիորեն կապված է մասոնների հետ: Նրա անմիջական նախաձեռնությամբ 1919 թ. ստեղծվեց Ազգերի լիգա, իսկ 1921 թ.՝ Միջազգային կապերի գծով խորհուրդ: Link A.S. Woodrow Wilson and the Progressive Era. London, 1954; Link A.S., Wilson the Diplomatist. A Look at His Major Foreign Policies. New York, 1974.

[5] www.rosimperija.info; citaty.info/man/tomas wudro wilson

[6] Հենրի Լաբուշեր (1831-1912), անգլիական քաղաքական գործիչ և հրապարակախոս, համայնքների պալատի անդամ, հայտնի մասոն: Տե՛ս Пименова Э., Политические вожды современной Англии, СПб, 1904.

զը» պատկերազարդ պարսավագրում զետեղել էր Եվրոպայի ապագա քաղաքական քարտեզը: Առաջնորդվելով նոր համաշխարհային կարգ հաստատելու մասոնական գաղափարախոսությամբ՝ մասոն Հենրի Լաբուշերն իր երևակայական քարտեզից վերացրել էր Ռուսական, Ավստրո-Հունգարական և Օսմանյան կայսրությունները, իսկ տարածքային առումով էական փոփոխությունների ենթարկված եվրոպական բոլոր պետությունները (բացառությամբ՝ Իսպանիայի, Իտալիայի և Շվեյցարիայի), պատկերել բացառապես հանրապետությունների տեսքով[1]:

Առաջին աշխարհամարտից հետո թեպետ եվրոպական որոշ պետությունների՝ Հ. Լաբուշերի կազմած սահմանները ճիշտ դուրս չեկան, բայց նա «պայծառատեսի» նման հստակ կանխատեսում էր երեք կայսրությունների կործանումը և ինքնուրույն պետություններ Լեհաստանի, Ֆինլանդիայի և Չեխոսլովակիայի ձևավորումը[2]:

Առաջին աշխարհամարտը 1903 թ. նույնքան «պայծառատեսորեն» կանխատեսում էր նաև համաշխարհային սիոնիստական կազմակերպության հիմնադիր և առաջնորդ, մասոն Թեոդոր Հերցլը[3]: Նրա գործընկեր մասոն Մաքս Նորդաուն[4] 1903 թ. օգոստոսին բացահայտ հայտարարեց համաշխարհային վերահաս պատերազմի անխուսափելիության մասին: «Սիոնի ավագագույն գիտունների արձանագրությունների» 1905 թ. հրատարակությունում ասվում էր, որ հրեաների պլաններին ընդդիմանալը կհանգեցնի «համընդհանուր համաշխարհային պատերազմի»[5]:

Սիոնիստները բնավ չէին թաքցնում իրենց մասնակցությունն Առաջին աշխարհամարտի բռնկման գործում: Պատերազմի առաջին օրերին հայտնի հրեա բանկիր, բրիտանական սիոնիստների առաջնորդ Լայոնել Ռոտշիլդը հպարտությամբ հայտարարում էր. «Համաշխարհային պատերազմն իմ պատերազմն է»[6]: Պատերազմի ավարտից հետո հրեական «Պեյեվիշե Վորդլե» թերթը 1919 թ. հունվարի 13-ի համարում գրում էր. «Միջազգային հրեությունը հարկադրեց Եվրոպային պատերազմ ընդունել, որպեսզի աշխարհով մեկ հաստատի նոր հրեական դարաշրջան» [7] : Այս իրողությունը պատերազմի ավարտից հետո հաստատում էր նաև սիոնիստ Լիտման Ռոզենտալը՝ «Ամերիկյան հրեական նորություններ» թերթի 1919 թ. սեպտեմբերի 19-ի համարում[8]:

Առավել ստույգ Առաջին աշխարհամարտը կանխատեսում էր լեհ սոցիալիստների պարագլուխ, մասոն Յուզեֆ Պիլսուդսկին[9]: Էսէռների կուսակցության ղեկավար, մասոն Վիկտոր Չեռնովը[10] իր հուշերում[11] վկայում է, որ 1914 թ. հունվարին Յուզեֆ Պիլսուդսկին Փարիզի Աշխարհագրական ընկերությունում իր զեկուցման մեջ վստահաբար հավաստում էր առաջիկայում սպասվող պատերազմ՝ մի կողմից Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի, մյուս կողմից՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Ռուսաստանը պարտություն կկրի Գերմանիայից, Անտանտի երկրների կողմից պատերազմի վերջում հանդես կգա ԱՄՆ-ը, նրանք կհաղթեն Եռյակ դաշինքին, որի արդյունքում աշխարհի քարտեզը կձևափոխվի[12]:

Առաջին աշխարհամարտի նախապես ծրագրված լինելը հաստատում էր Մեծ

---

[1] Տե՛ս Бостунич Г., Масонство в своей сущности и проявлениях, Ч. 1, Белград, 1928.
[2] Տե՛ս Бегунов Ю., Тайная история масонства, М. 2007, с. 66-67.
[3] Թեոդոր Հերցլ (1860-1904), լրագրող, փաստաբան, հրեական հասարակական, քաղաքական գործիչ, հրեական «Բնայ բրիտ» մասոնական օթյակի անդամ:
[4] Մաքս Նորդաու (1849-1923), հրեական հասարակական, քաղաքական գործիչ, սիոնիզմի հիմնադիրներից, «Բնայ բրիտ» մասոնական օթյակի անդամ:
[5] Դուգլաս Ռիդ, Գաղտնախորհուրդ սիոնը, թարգմ. ռուս., Ե., 2012, էջ 417:
[6] Бегунов Ю., Тайная история масонства, М., 2007, с. 150.
[7] Бегунов Ю., Указ. соч., с. 151; Д-Н. А. Евреи в России, с. 66.
[8] Տե՛ս Генри Форд., Международное еврейство, Берлин, 1924.
[9] Յոզեֆ Պիլսուդսկի (1867-1935), լեհ քաղաքական գործիչ, ֆելդմարշալ, լեհական պետության հրամանատար, այնուհետև փաստացի բռնապետ: «Սփույնի» և «Ուկրաինայի Մեծ Օթյակի» անդամ: Տե՛ս Наленч Д., Наленч Т. Юзеф Пилсудский: Легенды и факты, Пер. с пол., М., 1990.
[10] Վիկտոր Չեռնով (1873-1952), ռուս քաղաքական գործիչ, կոալիցիոն կառավարության անդամ, Սահմանադիր ժողովի նախագահ, հայտնի մասոն: Соловьев О., Русские масоны, М., 2007, с. 274; Башилов Б., История русского масонства, М., 2003.
[11] Տե՛ս Чернов В., Записки социалиста-революционера, том 1, Берлин, 1922.
[12] Տե՛ս Дуглас Рид, Спор о сионе. Иоганнесбург, 1986, с. 16; «Новый журнал», кн. XXVIII, Нью-Йорк, 1952.

Բրիտանիայի արտաքին գործերի նախարար մասոն Արթուր Բալֆուրը[1]: Պատերազմի սկզբում նա հայտարարեց, որ այն կավարտվի 1918 թ.՝ մինչ Քրիստոսի ծննդյան տոները[2]: Ռազմական նախարար, մասոն լորդ Հորաթիո Քիթչինները պատերազմն սկսվելուն պես, վստահ լինելով, որ այն երկար է տևելու, Ֆրանսիայի հետ երեք տարով պայմանագիր կնքեց և անգլիական զորքերի համար տարածքներ վարձակալեց[3]:

Առաջին աշխարհամարտի սկիզբը, ավարտն ու հետևանքները կանխատեսող վերը նշված գործիչների կանխագուշակումների կամ «պայծառատեսության» գաղտնիքը այն էր, որ նրանք՝ որպես բարձրաստիճան մասոններ, քաջատեղյակ էին միջազգային ամենահրատապ ու կնճռոտ խնդիրներին և աշխարհում կատարվող գաղտնի քաղաքական անցուդարձերին: Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի մասոն քաղաքական ղեկավարները պատերազմի մասին տեղեկացված էին տարիներ առաջ և նախապատրաստական աշխատանք էին տանում՝ հանդիսանալով աշխարհամարտի ջատագովները, գաղափարախոսներն ու կազմակերպիչները: Դրանով նրանք ամենից առաջ իրականացնում էին համաշխարհային հեղափոխության մասոնական ծրագիրը, որը դեռևս 1776 թ. կազմել էր բավարական իլյումինատների[4] գաղտնի ընկերության հիմնադիր մասոն Ադամ Վայսհաուպտը[5]: 1782 թ. ընդունված իլյումինատների ուխտի նպատակն էր համաշխարհային հեղափոխության ճանապարհով վերացնել միապետություններն ու քրիստոնեությունը՝ լավագույնս օգտագործելով մասոնական օթյակների ներուժն ու ազդեցությունը[6]:

Իլյումինատների 1787 թ. գաղտնի ծրագրի համաձայն՝ երկու տարի անց Ֆրանսիայում հեղափոխություն սկսվեց, որի «բռնարարքներն ու կործանարար պայթյունները» կանխատեսել էին մասոնների գաղտնագործունեությանը քաջատեղյակ ֆրանսիացի Մարքիզ դե Լյուշեն, աբբա Բարրյուելը, շոտլանդացի պատմաբան Զոն Ռոբինսոնը, ամերիկյան հոգևորական Զեդիդա Մորսը, անգլիական քաղաքական գործիչ և պատմաբան Էդմունդ Բյորքը և ուրիշներ: Նրանք միահամուռ նշում էին, որ այդ հեղափոխությունը ժողովրդական ցասման և պոռթկման արդյունք չէր, այլ մասոնական գաղտնի կազմակերպությունների ծրագրված գործողություններ, որոնց իրական կազմակերպիչները մնում են չբացահայտված[7]:

Անգլիական պատմաբան և քաղաքագետ լորդ Ակտոնի կարծիքով «Հեղափոխության մեջ ամենասոսկալին ոչ թե վայրագությունն ու սանձարձակությունն են, այլ դրա կազմակերպումը: Կազմակերպիչները տարբեր դիմակների տակ քողարկվում են, սակայն հենց սկզբից նրանց առկայության ոչ մի կասկած չկա»[8]:

Ըստ դավադրության տեսության՝ դիմակների տակ թաքնված կազմակերպիչները մասոններն ու հրեաներն են, որոնք ակտիվ դերակատարում ունեցան 1848 թ. Եվրոպան ցնցած հեղափոխություններում: Այդ իրադարձություններից երկու տարի առաջ Անգլիայի ապագա վարչապետ, ազգությամբ հրեա բարձրաստիճան մասոն Բենջամին Դիզրայելին գրում էր. «Ներկայումս Գերմանիայում նախապատրաստվող հեղափոխությունը լիովին զարգացվում է հրեաների ղեկավարությամբ»[9]: Նա 1840-ական թթ. զգուշացնում էր, որ «Եվրոպայի մի զգալի մասը ծածկված է գաղտնի ընկերությունների (մասոնական օթյակների՝ Ֆ.Մ.) ցանցով՝ հար ու նման երկրագունդը ցանկապատած եր-

---

[1] Արթուր Բալֆուր (1848-1930), Մեծ Բրիտանիայի վարչապետ 1902-1905 թթ., պահպանողական, 1916-1919 թթ. արտաքին գործերի նախարար, «Կլոր սեղան» մասոնական օթյակի անդամ:
[2] Տե՛ս Муров А., Плоды народовластия, Париж, 1925.
[3] Տե՛ս Бегунов Ю., Указ. соч., с. 149.
[4] Իլյումինատ՝ լատիներեն illuminatus՝ լուսավորյալ բառից: 1776 թ. Բավարիայում ստեղծված մասոնական օրդեն: Հետապնդվում էր կաթոլիկ եկեղեցու կողմից:
[5] Ադամ Վայսհաուպտ (1748-1830), Ինգոլշտադտի հոգևոր ճեմարանի աստվածաբանության պրոֆեսոր:
[6] Տե՛ս Джонатан Блэк. Тайная история мира. Пер. с англ., СПб, 2008, с. 557-558; Карпачев С.Д. Масоны. Словарь, М., 2008, с. 177; Спаров В. Полная история масонов в одной книге. М., 2010, с. 138.
[7] Տե՛ս Джаспер Ридли. Франкмасоны. Пер. с англ. М., 2009, с. 151-159; Курбатов В. Тайные общества масонов. М., 2007, с. 34. John Robinson, Proofs of a Conspiracy. Boston, 1967, p. 106.
[8] Դուգլաս Ռիդ, Նշված աշխ., էջ 230-231:
[9] Ռիդ Դ., նշված աշխ., էջ 282, 290; Ланин П. Тайные пружины истории. «Молодая гвардия», 1991, N7, с. 252.

կաթուղագծերի, որոնք ունակ են ոչնչացնելու մեր ողջ հասարակությունը»[1]: Անդրադառնալով դրանում հրեաների դերակատարությանը՝ Բ. Դիզրայելին 1852 թ. Համայնքների պալատում հայտարարեց. «Հրեաների ազդեցությունը հնարավոր է հաստատել՝ Եվրոպայի կործանման սկզբունքների վերջին ակորդներում», քանի որ «ժամանակավոր կառավարություն ստեղծող գաղտնի ընկերությունների գլխին կանգնած են հրեական ռասայի մարդիկ»[2]:

Համաշխարհային հեղափոխության ջատագով մասոնները և գաղտնի ընկերությունները նոր համաշխարհային կարգ հաստատելու նպատակով ձգտում էին կյանքի կոչել իրենց գլխավոր կարգախոսը՝ «Ազգային հեղափոխությունների և պատմականորեն ձևավորված պետությունների կործանումից դեպի ինտերնացիոնալ հեղափոխություն և մասոնական գերպետության ստեղծում»[3]:

Համաշխարհային մասոնական հանրապետություն ստեղծելու գաղափարը «Չորս մասոնական ճառ միայն հավատարիմ եղբայրների համար» գրքույկում[4] բացահայտեց գերմանացի փիլիսոփա և երևելի մասոն Կառլ Կրաուզեն, որի համար նրան վտարեցին մասոնությունից[5]:

1848 թ. նոյեմբերի 4-ին անվանի գրող և մեծ մասոն Վիկտոր Հյուգոն[6], Ֆրանսիայի օրենսդիր ժողովում կոչ արեց ստեղծել «Եվրոպայի Միացյալ Նահանգներ»[7]: Այս գաղափարը, մասոնական բազմաթիվ փաստաթղթերից զատ, իր արտահայտությունը գտավ նաև 1848 թ. փետրվարի 21-ին լույս տեսած Կ. Մարքսի «իլյումինիզմի ոգով տոգորված … Կոմունիստական մանիֆեստում»[8]: Դրանից օրեր անց մասոնական օթյակները եվրոպական մի շարք երկրներում հեղափոխություն սկսեցին: 1864 թ. Կ. Մարքսը բանվորների միջազգային ընկերակցություն հիմնադրեց, որն, օգտագործելով Ինտերնացիոնալի հեղափոխական շարժումները, նպատակ ուներ համաշխարհային պետություն ստեղծել:

Եվրոպայի Միացյալ Նահանգներ ստեղծելու գաղափարով հանդես եկավ նաև իտալական ռիսորջիմենտոյի ականավոր գործիչ, պատվարժան մասոն Ջուզեպպե Գարիբալդու[9] 1867 թ. ստեղծած «Խաղաղության և ազատության լիգա» միջազգային մասոնական կազմակերպությունը: Այս կազմակերպության անդամ ռուս քաղաքական գործիչ և մասոն Միխայիլ Բակունինին[10] Առաջին ինտերնացիոնալի հրեա ղեկավարները 1869 թ. վտարեցին իրենց շարքերից՝ հրեաների դերակատարումն Առաջին ինտերնացիոնալում և Կ. Մարքսի կապը Ռոտշիլդի հետ իր աշխատությունում[11] գաղտնազերծելու համար: Կոմունիստական շարժման ղեկավարությունն անցավ կաթոլիկություն ընդունած հրեա Կ. Մարքսի[12] ձեռքը: Ամերիկյան պատմաբան Էնթոնի Սեթթոնի տվյալներով Կ. Մարքսը ֆինանսավորվում էր Ռոտշիլդի կողմից, կատարում նրա սոցիա-

---

[1] Ռիդ Դ., նշված աշխ., էջ 293:
[2] Նույն տեղում, էջ 282:
[3] Курбатов В.И. Тайное общество масонов, М., 2007, с. 72. Иванов В.Ф. Тайны масонства. Глава 9, Харбин, 1935.
[4] Տե՛ս Karl Krause. Die drei ältesten Kunsturkunden der Freimaurer brüderschaft. Dresden, 1849.
[5] Տե՛ս https://en.m.wikipedia.org/wiki/krause
[6] Վիկտոր Հյուգոն (1802-1885) «Սիոնի ղեկակալ» մասոնական նշանավոր օթյակի Մեծ Վարպետն էր 1844 թ.-ից մինչև իր մահը: Տե՛ս Гоголицин Ю.В. Тайные общества в истории человечества, или кто правит миром. Ростов на Дону, 2010, с. 57.
[7] Курбатов В.И. Указ. соч., с. 73.
[8] Ռիդ. Դ., Նշված աշխ., էջ 358:
[9] Ջուզեպպե Գարիբալդին (1807-1882) մասոնական մի քանի օթյակի անդամ էր, 33 աստիճանի մասոն, Պալերմոյի Մեծ Արևելք օթյակի Մեծ Վարպետ (1863 թ.), Իտալիայի Մեծ Արևելք Օթյակի Մեծ Վարպետ (1864 թ.), Մեմֆիսի արարողակարգի Մեծ Վարպետ (1881 թ.): Տե՛ս Морамарко Микеле. Масонство в прошлом и настоящем. Пер. с ит., М., 1990, с. 278.
[10] Մ. Ի. Բակունինը (1814-1876) «Ինտերնացիոնալ եղբայրների ընկերակցություն» մասոնական կազմակերպության հիմնադիրն էր, 32 աստիճանի մասոն, մի շարք օթյակների անդամ: Տե՛ս Замойский Л. За фасадом масонского храма. М., 1990, с. 234-235; Пирумова Н. Бакунин. М., 1970, с. 333; Карпачев С.П., Указ. соч., с. 49.
[11] Տե՛ս Бакунин М.А. Интернационал, Маркс и евреи. Пер. с фр., М., 2008, с. 155.
[12] Скляренко В. и др. 100 знаменитых евреев. М. 2006, с. 256-260; Մերինգ Ֆ., Կառլ Մարքս: Նրա կյանքի պատմությունը, Ե., 1961, էջ 37-38; Ռիդ Դ., Նշված աշխ., էջ 295.

լական պատվերը և նպաստում «վերնախավի գերիշխանության հաստատմանը»[1]:

Նոր համաշխարհային կարգ հաստատելու մասոնության ծրագիրն ընդունվեց 1871 թ. օգոստոսին Չառլսթոնում (ԱՄՆ) կայացած «Աշխարհի գերագույն խորհրդում», որին մասնակցում էր 11 գլխավոր մասոն: Խորհուրդը հաստատեց դրան հասնելու ծրագիր, որը կազմել էր համաշխարհային մասոնության «դոգմատիկ» առաջնորդ Ալբերտ Փայքը[2]: Նա 1871 թ. օգոստոսի 15-ին իլյումինատ մասոնների առաջնորդ Ջուզեպպե Մացցինիին[3] հղած նամակում ընդհանուր գծերով շարադրում էր երեք համաշխարհային պատերազմների միջոցով աշխարհում մասոնների գերիշխանություն հաստատելու իր ծրագիրը: Առաջին աշխարհամարտն անհրաժեշտ էր, որպեսզի Ռուսաստանում տապալվեր ցարի իշխանությունը, հաստատվեր կոմունիստական աթեիզմի վարչակարգ, և Ռուսաստանն օգտագործվեր որպես «խրտվիլակ» մասոնության առաջ դրված խնդիրները լուծելու համար: Երկրորդ աշխարհամարտի արդյունքում Եվրոպայում պետք է ուժեղանար քաղաքական սիոնիզմը, որպեսզի Պաղեստինում ստեղծվեր հրեական անկախ պետություն: Երրորդ աշխարհամարտը մասոնների հրահրմամբ բռնկվելու էր Մերձավոր Արևելքում, իսրայելցիների և արաբների միջև գաղափարական հայացքների խորացման պատճառով: Պատերազմը տարածվելու էր ամբողջ աշխարհում, մահմեդականությունն ու քաղաքական սիոնիզմը միմյանց ոչնչացնելու էին, որի արդյունքում հաստատվելու էր «համաշխարհային կառավարության» իշխանություն:

Ըստ Ա. Փայքի՝ «Մասոնության լիակատար հաղթանակի համար երեք համաշխարհային պատերազմներից երրորդում մահմեդական աշխարհը կկործանվի, որից հետո մենք կհրահրենք հսկայական սոցիալական ցնցում, որի սարսափները բոլորին ցույց կտան անհավատության կործանարարությունը: Հեղափոխական փոքրամասնությունը կոչնչացվի, իսկ քրիստոնեությունում հիասթափված մեծամասնությունը .... մեզանից կստանա Լյուցիֆերի[4] ուսմունքի ճշմարիտ լույսը»[5]:

Այս ծրագրի իրականացմանը Առաջին աշխարհամարտից շատ տարիներ առաջ ձեռնամուխ եղան Արևմտյան Եվրոպայի երկրների մասոնական մեծ օթյակները, որոշ երկրների ղեկավարներ, բազմաթիվ ազդեցիկ քաղաքական, պետական և զինվորական գործիչներ, որոնք ոչ միայն երևելի կամ պատվարժան մասոններ էին, այլև համաշխարհային քաղաքականություն որոշող մարդիկ: Նրանք տարիներ շարունակ հետևողականորեն նախապատրաստում էին մեծ հակամարտություն աշխարհը վերափոխելու համար:

Հոլանդացի պատմաբան Յան Վան Հելզինգը «Գաղտնի ընկերությունները և նրանց հզորությունը XX դարում» աղմկահարույց գրքում [6] առաջ է քաշում այն միտքը, որ Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը 1871 թ., վերջնականապես միավորելով գերմանական պետությունները, խախտեց երկու հարյուր տարուց ավելի

---

[1] Տե՛ս Сеттон Э. Уолл стрит и большевистская революция. Пер. с англ., М., 1998; Его же, Власть доллара. Пер. с англ., М., 2003, с. 55, 66.

[2] Ալբերտ Փայք (1809-1891), ամերիկյան երևելի հասարակական գործիչ, փաստաբան, լրագրող, գեներալ, Շոտլանդական կանոնակարգի Մեծ կոմանդոր, 33 աստիճանի մասոն, Կու Կլուս Կլանի օրդենի հիմնադիր: Նրա «Ֆրանկմասոնների բարոյականությունը և դոգմաները» աշխատությունը համարվում է մասոնների Աստվածաշունչը, իսկ ինքը ժամանակակից մասոնության գլխավոր տեսաբանը: Տե՛ս Denslow W.R. 10000 Famous Freemasons. Columbia, Missouri, 1957, 1960, vol. 3, p. 340-341; Eicher John H. Civil War High Commands. Stanford, 2001, p. 429; Пэт Морган. Секреты масонов. Пер. с англ. М., 2008, с. 124-129; Боголюбов Н. Тайные общества XX века, М. 1995, с. 34-36.

[3] Ջուզեպպե Մացցինի (1805-1872), Ռիսորջիմենտոյի երևելի գործիչ, «Երիտասարդ Իտալիա» գաղտնի կազմակերպության հիմնադիր, «Իտալիայի Մեծ Արևելք» օթյակի Մեծ Վարպետ, 33 աստիճանի մասոն: Տե՛ս Моромарко М. Указ. соч., с. 121; Соловьев О.Ф. Масонство далекое и близкое. Новая и новейшая история, 1992, N 4, с. 76; Замойский Л. Указ. соч., с. 7.

[4] Լյուցիֆեր՝ լատիներեն lucisferre, բառացի՝ լուսաբեր: Քրիստոնեական դիցաբանությունում Երկնային հոր հոգևոր զավակ, «արշալույսի որդի», որը երկնքից ընկել է ստորգետնյա աշխարհ ու դարձել սատանա: Մասոնական ուսմունքում մասոնության Աստվածը՝ Տիեզերքի Մեծ ճարտարապետը, համարվում է Լյուցիֆերը: Տե՛ս Селевич Ю. Вольные каменщики: масонство в его прошлом и настоящем. «Наука и техника», 2008, N4, с. 59.

[5] Տե՛ս Шмаков А.С. Международное тайное правительство. М. 1912; Ланин П. Тайные пружины истории. «Молодая гвардия», 1991, N 8, с. 253.

[6] Տե՛ս Jan Van Helsing. Geheim Gesellschaften und ihre Macht im 20 Jahrhundert. Ewertverlag, 1993. Хельзинг Й. В. Тайные общества и их могущество в XX веке. М., 1995.

Եվրոպայում տիրող քաղաքական հավասարակշռությունը: Գերմանիան XX դարի սկզբին լուրջ վտանգ էր ներկայացնում ոչ միայն իլյումինատների, այլև մինչև այդ Եվրոպայում անվերապահորեն գերիշխած, բայց միանձնյա առաջատարի դիրքերը կորցրած Մեծ Բրիտանիայի համար:

Միջազգային խոշոր բանկիրները, որոնք աշխարհի տնտեսական զարգացման իրենց ծրագրերում բացառում էին Գերմանիայի մասնակցությունը, ձգտում էին հնարավոր բոլոր միջոցներով ճնշել և վերահսկել Եվրոպայի տնտեսական, ռազմական ու քաղաքական հավասարակշռությունը խախտած և մեծ հավակնություններ ունեցող կայզերական պետությանը: Այդ գործում առավել մեծ ջանքեր թափեցին հատկապես բրիտանական քաղաքագետներն ու մասոնները: Նրանցից «Բրիտանական կայսրության հայր» մասոն Սեսիլ Ռոդսը[1] XIX դարի վերջին ձևակերպեց բրիտանական իսթեբլիշմենթի խնդիրը: Նա ասում էր. «Ես աչքերս բարձրացրեցի դեպի երկինք և իջեցրի դեպի երկիր: Ապա ինքս ինձ ասացի. թե մեկը և թե մյուսը պետք է դառնան բրիտանական: Եվ ինձ պարզ դարձավ ..., որ բրիտանացիները լավագույն ռասան են, արժանի համաշխարհային գերիշխանության»[2]:

Բրիտանական կայսրությունը հզորացնելու գործում կատարած նվաճումների համար «Աֆրիկյան Նապոլեոն» մականունը ստացած Սեսիլ Ռոդսի մասին Յոզեֆ Չեմբեռլենն ասում էր. «Հատկապես այնպիսի մարդկանց, ինչպիսին Սեսիլ Ռոդսն է, Անգլիան պարտական է իր կայսրության հզորության համար»: Վարչապետ լորդ Սոլսբերին գրում էր, որ «մեր թոռները մեզ երջանիկ մարդիկ կհամարեն, քանզի մենք Մեծ Սեսիլ Ռոդսի ժամանակակիցն էինք» [3]: Վիկտորիա թագուհին Ս. Ռոդսին համարում էր «կատարյալ հրաշալի» մարդ և ափսոսում, որ իր «նախարարները նրա նման չեն»[4]: Գերմանիայի կայզեր Վիլհելմ II-ը Ս. Ռոդսին ասում էր. «Եթե ես ունենայի այնպիսի վարչապետ, ինչպիսին դուք եք, ապա ես կդառնայի աշխարհի ամենամեծ տիրակալը» [5]: Ամերիկյան հանրաճանաչ գրող մասոն Մարկ Տվենը[6] Սեսիլ Ռոդսի մասին ասում էր, որ նա «կանգնած է գլխապտույտ բարձունքում, երկնքի գմբեթի տակ, մնալով իր ժամանակի հրաշքը, ներկա դարի առեղծվածը, թևերով հրեշտակապետ՝ աշխարհի մի մասի համար և պոզերով սատանա՝ մյուս մասի համար: Ոչ±ն է նրա ամենազորության գաղտնիքը»[7]: Ս. Ռոդսի մասոնական գաղտնագործունեությունը բացահայտած ամերիկյան պատմաբան Ջիմ Մարսը «Գաղտնիության կանոնները» գրքում նրան անվանում է «ժամանակակից գաղտնի ընկերությունների նախահայրը»[8]:

1891թ. փետրվարի 5-ին Սեսիլ Ռոդսն ստեղծեց իլյումինատների և մասոնական օթյակի տիպի գաղտնի «Ընտրյալների ընկերություն», որը պատմության մեջ մտել է «Կլոր սեղան» անունով: Ընկերության մեջ ընդգրկվեցին բրիտանական հայտնի քաղաքական գործիչներ լորդ էշերը, լորդ Ալֆրեդ Միլները, լորդ Արթուր Բալֆուրը, հրապարակախոս Ուիլյամ Սթեդը, իսկ մի փոքր ուշ՝ լորդ Գրեյը, Սոլսբերին, Ռոզբերին, Առնոլդ Թոյնբին և ուրիշներ: «Կլոր սեղանին» հովանավորում և աջակցում էր դրան անդամագրված բրիտանական խոշոր բանկիր, հրեա Նաթան Ռոտշիլդը[9]:

«Կլոր սեղանի» նպատակն էր վերականգնել մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների կապը, ապահովել անգլո-սաքսոնական ռասայի ազդեցիկ ներկայացու-

---

[1] Սեսիլ Ռոդս (1853-1902), անգլիական խոշոր բիզնեսմեն, «Դե Բիրս» ընկերության ղեկավար, ալմաստե թագավոր, Կապի գաղութի վարչապետ, Ռոդեզիա պետության հիմնադիր, Վիկտորիա թագուհու Գաղտնի խորհրդի անդամ: Տե՛ս Давидсон А.Б. Сесиль Родс и его время. Пер. с. англ. М., 1984; его же. Сесиль Родс. Строитель империи. Пер. с англ., М., 1998.

[2] Robert Huttenback. British imperial experience. New York, 1966, p. 102.

[3] Տե՛ս Дионео. Из Англии. Русское богатство, 1899, N 7/10, отдел II, с. 74.

[4] Letters of Queen Victoria. Series III (1885-1901), vol. II, London, 1930.p. 13.

[5] Eyck E. Das persönliche Regiment Willhelms II. Erienbach – Zürich, 1948, S. 236.

[6] Մարկ Տվենը (1835-1910) մասոն ձեռնադրվել է 1861 թ. մայիսի 22-ին Սենտ Լուիսի Polar Star Lodje N 79 օթյակում: Տե՛ս Пэт Морган. Указ. соч., с. 74; Морамарко М. Указ. соч., с. 272; Карпачев С.П. Указ. соч., с. 416.

[7] Марк Твен. Собр. соч. Том 9. М., 1961, с. 562-564.

[8] Jim Marrs. Rule by Secrecy. Paperbacks, 2001, p. 119.

[9] Տե՛ս Давидсон А.Б. Сесил Родс. Пер. с англ. Смоленск, 1998; Хаггер Н. Синдикат. История мирового правительства. Пер. с англ. М., 2009.

ցիչների կողմից աշխարհի գաղտնի կառավարումը, տնօրինել համաշխարհային կապիտալը: Ս. Ռոդսի երազանքն էր ունեցած ահռելի հարստությունն օգտագործել այնպես, որ կառավարություններն ու քաղաքագետները ծառայեն «Կլոր սեղանին», բրիտանական գերիշխանությունը տարածվի ամբողջ աշխարհում, իսկ անգլերենը դառնա համաշխարհային լեզու: Նաթան Ռոտշիլդի միջոցով «Կլոր սեղանը» կապեր հաստատեց սիոնիստների, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգներում չափազանց ազդեցիկ և ամենազոր ֆինանսիստ մասոններ Յակոբ Շիֆֆի, Ֆելիքս Վարբուրգի, Օտտո Կանի, Ռոկֆելլերի, Ժերոմ Խանաուերի, Կարնեգիի և Դանիել Գուգենհայմի հետ[1]:

«Կլոր սեղանը» բրիտանական գերիշխանություն հաստատելու նպատակով կառավարությանը դրդեց Աֆրիկայի հարավում 1899-1902 թթ. անգլո-բուրական պատերազմ սկսել: Պատերազմի գլխավոր հրահրողը Ռոտշիլդների տան ներկայացուցիչ և համաշխարհային մասոնության գլխավոր դեմքերից լորդ Ալֆրեդ Միլներն[2] էր: Կապի երկրի նահանգապետ և գերագույն կոմիսար Ա. Միլները 1902 թ. Ս. Ռոդսի մահից հետո գլխավորեց «Կլոր սեղանը»: Նրա ղեկավարությամբ մասոնական այդ ընկերությունը Անգլիայի «հավերժ շահերը» և գերիշխանությունը պահպանելու նպատակով ձգտում էր. ա/ հսկողության տակ վերցնել համաշխարհային և հատկապես Աֆրիկայի ու Ռուսաստանի տնտեսական պաշարները, բ/ վերջ տալ Գերմանիայից ու Ռուսաստանից սպառնացող մրցակցությանը, թույլ չտալ նրանց միջև դաշինք, գ/ վերահսկել համաշխարհային ֆինանսական համակարգը ԱՄՆ ֆինանսների նկատմամբ հսկողություն սահմանելու ճանապարհով, դ/ վերացնել Եվրոպայում ազգային պետությունները, և ստեղծել Եվրոպական միություն, ե/ սանձազերծել համաշխարհային պատերազմ՝ այս խնդիրները կյանքի կոչելու համար[3]:

Պատերազմները բրիտանական շահերին ծառայեցնելու գաղափարը XIX դարի կեսերին ձևակերպել էր անգլիական հայտնի պատմաբան, մասոն Թոմաս Կարլայլը, ըստ որի՝ «Մայրցամաքային բոլոր պետությունների պարտականությունն է պատերազմներ վարել Անգլիայի շահերի համար»:

«Կլոր սեղանի» հետ սերտորեն համագործակցող Յակոբ Շիֆֆը նոր համաշխարհային կարգ հաստատելու գաղափարն իրականացնելու ճանապարհին 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմում, ցանկանալով Ռոմանովների միապետության անկումը, իր գլխավորած սինդիկատով 110 մլն դոլար փոխառություն հատկացրեց Ճապոնիային, որի համար արժանանացավ այդ պետության բարձրագույն պարգևներին[4]:

ԱՄՆ մասոն նախագահ Թեոդոր Ռուզվելտի[5] միջնորդությամբ 1905 թ. ամռանը Պորտսմութում ընթացող հաշտության բանակցությունների ժամանակ Յ. Շիֆֆը պարտություն կրած Ռուսաստանի կառավարության ղեկավար Ս. Յու. Վիտտեին առաջարկեց հրեաներին շնորհել հավասար իրավունքներ: Մերժում ստանալով՝ նա ֆինանսավորեց իր համոզմամբ «համայն մարդկության թշնամի Ռուսաստանում» 1905-1907 թթ. հեղափոխության բռնկմանը[6]:

Սկսած 1908 թ. համաշխարհային պատերազմ սկսելու մասոնական դավադրության կենտրոնը գտնվում էր մասոնության բնօրրան Անգլիայում, որտեղից եվրոպական երկրների մասոններին ուղարկվում էին համապատասխան հրահանգներ: «Կլոր սե-

---

[1] Տե՛ս Gerry Docherty, Jim MacGregor. Hidden history. The Secret Origins of the First Warld War. Edinburg, 2013; Carroll Quigly. The Anglo-American Establishment. New York. 1981; Carroll Quigly. Tragedy and Hope: A History of the World in Our Time. N.Y. 1966.

[2] Տե՛ս Парфенов И.Д. Колониальная экспансия Великобритании в последной трети XIX века, М. 1991; Никитина И. А. Захват бурских республик Англией (1899-1902). М. 1970.

[3] Տե՛ս Платонов О.А. Тайное мировое правительство. М. 2014, с. 14; Хаггер Н. Синдикат. История мирового правительства. Пер. с англ. М. 2009, с. 39; Алексеева И. Миссия Мильнера. «Вопросы истории». 1989, N 10, с. 145.

[4] Տե՛ս Naomi Wiener Cohen. Jacob H. Schiff: a study in American Jewish leadership. New England, Hanover, 1999, p. 129-134; Cyrus Adler. Jakob Henry Shiff: A Biographical Sketch. N.Y., 1921, p. 12-14.

[5] Թեոդոր Ռուզվելտը (1858-1919) բարձրաստիճան մասոն էր, Օյսթեր Բեյի Մաթինեքոք թիվ 806 օթյակի անդամ, Փենթալփա թիվ 23 օթյակի պատվավոր անդամ: Տե՛ս William R. Denslow. 10000 Famous Freemasons. N.Y. 1957; Roberd Hovard. United Stated States Presidents and the Illuminati. Masonic Power Structure. N.Y. 1999.

[6] Տե՛ս Naomi Wiener Cohen. Op. cit. p. 32, 137; Витте С.Ю. Воспоминание. М. 1960, том 2, с. 440; Фроянов И.Я. Октябрь семнадцатого. СПб, 1997, с. 160.

ղանը» սերտ համագործակցում էր «Ֆրանսիայի Մեծ Արևելք» և հրեական «Բնայ Բրիտ» մասոնական օթյակների հետ, որոնք ոչ միայն ակտիվ հակագերմանական քարոզչություն էին իրականացնում, այլև առաջ էին քաշում անհապաղ պատերազմ սկսելու և ինքնուրույն հրեական պետություն ստեղծելու գաղափարը: Էրեց Իսրայելի գաղափարը ժամանակին սաղմնավորվել է հրեա փիլիսոփաներ Մոզես Հեսսի «Հռոմ և Երուսաղեմ» (1862 թ.) և Լեոն Պինսկերի «Ինքնաազատագրում» (1882 թ.) գրքերում, փիլիսոփա, հրապարակախոս Ուշեր Գինցբերգի և ժամանակակից իվրիտի «հայր» էլիեզեր Բեն-Իեհուդի հոդվածներում[1]:

Հրեական ազատ Պաղեստին ստեղծելու իրական գաղափարախոսը դարձավ լրագրող, էմանսիպացված հրեա, մասոն Թեոդոր Հերցլը: Նա Ալֆրեդ Դրեյֆուսի[2] դատավարության ազդեցության տակ գրեց «Հրեական պետություն» աշխատանքը, որտեղ հրեաների իրավազրկությանը վերջ տալու նպատակով առաջարկում էր «երկրագնդի բավականին մեծ մասի վրա … նրանց տալ ինքնորոշման իրավունք»: Հրեական «Jewish Chronical» (Հրեական տարեգիրք) թերթը Թ. Հերցլի առաջարկությունն անվանեց «երբևէ արված ամենազարմանալի առաջարկություններից մեկը»[3]:

Կարճ ժամանակում թերթի շարքային թղթակից Թ. Հերցլը դարձավ «բացարձակ անսովոր բնույթի համաշխարհային կերպար»[4], ում համարում էին «փրկիչ»[5]: Պատմության թատերաբեմում գիսաստղի պես արագորեն հայտնված դոկտոր Թ. Հերցլը, ոգևորված գրքի աննախադեպ հաջողությունից[6], 1897 թ. օգոստոսի 29-ին Բազելում սիոնիստների վեհաժողով հրավիրեց: Այն հայտարարեց «Համաշխարհային սիոնիստական կազմակերպություն» ստեղծելու մասին, հրեաներին հռչակեց որպես առանձին ազգ ու խնդիր դրեց հասնելու «հասարակական ճանաչման և իրավականորեն պաշտպանված տան»: Սիոնիստների առաջնորդ դարձած Թ. Հերցլը, «Հրեական պետության վերականգնման» գաղափարը համարելով «շատ հին»[7], գտնում էր. «Հաճելի կլինի, եթե մենք մեզ համար երկիր նվաճենք … առողջ բանականության հիմքի վրա, մեր տրամադրության տակ գտնվող միջոցներով և գործնական քաղաքականության սահմաններում: Մեր լավագույն ուժերը պետք է իրենց նվիրեն այդ հրաշալի գործին»[8]: Բազելի վեհաժողովից հետո Թ. Հերցլը հայտարարեց. «հրեական պետությունն արդեն գոյություն ունի»[9]:

Թ. Հերցլն անկեղծորեն հավատում էր, որ ստեղծելով հրեական ազատ Պաղեստին՝ կլուծվեն «համաշխարհային հրեական ազգի» բոլոր խնդիրները: Գերմանիայի կայզեր Վիլհելմ II-ը գտնում էր, որ «հրեաները որքան շուտ մեկնեն Պաղեստին, այնքան լավ»: Նա Կ. Պոլսում Թ. Հերցլի համար միջնորդեց սուլթան Աբդուլ Համիդին, իսկ 1898 թ. Երուսաղեմում ընդունելության արժանացրեց Թ. Հերցլին ու նրա պատվիրակությանը[10]: Ոգևորված այդ հանդիպումից՝ Թ. Հերցլն սկզբում ցանկանում էր հրեական պետություն ստեղծել Օսմանյան կայսրությունից Պաղեստինում տարածք գնելու ճանապարհով: Հրեա պատմաբան Ռեյչել Էլբոյմ Դրորի համոզմամբ Թ. Հերցլը մտադիր էր այս խնդիրը լուծել՝ հայկական հարցը սիոնիզմի շահերին ծառայեցնելու միջոցով: Այս միտքը նրան հուշեց իր դիվանագիտական գործակալ և Աբդուլ Համիդի խորհրդական Ֆիլիպ Նալինսկին: Թ. Հերցլը հուսով էր Բարձր Դռանը հրեաների ու միջազգային սիոնիզմի աջակցությունը խոստանալով՝ ակնկալել, որ սուլթան Աբդուլ Համիդը կհակվի

---

[1] Տե՛ս Бегунов Ю. Указ. соч., с. 69.

[2] Ալֆրեդ Դրեյֆուս (1859-1935), ֆրանսիական բանակի գլխավոր շտաբի սպա, ում 1895թ. հունվարի 5-ին Փարիզի զինվորական ակադեմիայում աստիճանազրկեցին Գերմանիայի օգտին լրտեսության կեղծ մեղադրանքով և դատապարտեցին ցմահ բանտարկության:

[3] Бегунов Ю. Указ. соч., с. 69; Ռիդ Դ., Նշված աշխ., էջ 340:

[4] Ռիդ Դ., նշված աշխ., էջ 344:

[5] Джонсон П. Указ. соч., с. 455.

[6] 1896 թ. հունվարին Վիեննայում լույս տեսած Թ. Հերցլի 63 էջից բաղկացած գրքույկը վերահրատարակվեց 80 անգամ և թարգմանվեց 18 լեզուներով: Տե՛ս Джонсон П. Указ. соч., с. 452-453.

[7] Герцль Теодор. Еврейское государство. Пер. с нем., СПб, 1896, с. 3.

[8] Герцль Теодор. Сборник. Пер. с нем., Петроград, 1918, с. 177.

[9] Ռիդ Դ., նշված աշխ., էջ 341; Джонсон П. Указ. соч., с. 456.

[10] Տե՛ս Джонсон П. Указ. соч., с. 455-457.

Երուսաղեմը վերադարձնել հրեաներին: Այդ նպատակով նա 1896 թ. հունիսին մեկնեց Կ. Պոլիս՝ «իր հետ տանելով Պաղեստինի գնման գլխավոր պլանը»: Թ. Հերցլը, Աբդուլ Համիդին չգրգռելու նպատակով նրանից տարածք էր խնդրում ոչ թե հրեական պետություն ստեղծելու, այլ ազգային տուն հիմնադրելու համար: Նա սուլթանին առաջարկեց 20 մլն. ֆունթ սթեռլինգ՝ պարտավորվելով Պաղեստինի փոքրիկ հողակտորի դիմաց «կարգի բերել նրա տունը, բարելավել նրա ֆինանսական դրությունը և նրա օգտին տրամադրել հասարակական կարծիքն ամբողջ աշխարհում»[1]:

Սուլթանը մերժեց այդ առաջարկությունը, բայց Թ. Հերցլին պարգևատրեց «Մեջիդիե» շքանշանով՝ խնդրելով ապահովել հրեաների աջակցությունը հայկական հարցում[2]: 1901 թ. մայիսին Թ. Հերցլը Աբդուլ Համիդի մտերիմ և խորհրդական, հրեա արևելագետ Ամին Վամբերիի[3] միջնորդությամբ հանդիպեց սուլթանին ու առաջարկեց Պաղեստինի դիմաց վճարել Օսմանյան կայսրության արտաքին պարտքի մի մասը: Սուլթանը մերժեց նաև այս առաջարկությունը, բայց հարյուր հազար հրեաների Պաղեստին գաղթելու իրավունք շնորհեց: Դրա դիմաց հրեաները եվրոպական բանկերում նրա անունով մեծ գումարներ փոխանցեցին[4]:

Հարուստ սիոնիստ Իսրայել Զանգվիլը 1910 թ. ապրիլին Լոնդոնի «Ֆորթնայթլի ռևյու» ամսագրում տպագրած հոդվածում պարտավորվում էր մարել Օսմանյան կայսրության արտաքին պարտքը, թուրքերենը ճանաչել իր մայրենի լեզուն, եթե հրեաներին Պաղեստին անսահմանափակ ներգաղթելու հնարավորություն տրվի:

Աբդուլ Համիդն ամեն կերպ սահմանափակում էր իր երկրում հրեաների համախմբվածությանը, ուստի նրա քաղաքականությունից զայրացած սիոնիստները համալրեցին սուլթանի հակառակորդների շարքերը: Դրան ձեռնամուխ եղան ամենից առաջ «Թուրք հայրենասերների ինքնատիպ սրբավայր Սալոնիկի» [5] բնակչության մեծամասնություն կազմող հրեաները [6], որոնք ընդգրկված էին բազմաթիվ միություններում ու գաղտնի ընկերություններում: Նրանք հիմնականում իտալական քաղաքացիություն ունեին, իսկ շատերն իտալական մասոնական օթյակների անդամ էին: Այս հրեաները կազմեցին 1906 թ. Փարիզից Սալոնիկ տեղափոխված «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնական կորիզը[7]:

Կուսակցության պարագլուխները մի խումբ հավատափոխ հրեաների հետ միասին «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի հովանավորությամբ և հրեական «Բնայ Բրիտ»[8] օթյակի անդամ էմմանուել Կարասսոյի[9] գլխավորությամբ 1908 թ. Սալոնիկում ստեղծեցին «Երիտասարդ Թուրքիա» մասոնական օթյակը: Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջերարդ Լոութը «Երիտասարդ Թուրքիայի» անդամներին անվանում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության հրեական կոմիտե, փաստում մասոնների և հրեա երիտթուրքերի դաշինքը, հրեաներին համարում երիտ-

---

[1] Տե՛ս Maruan R. Buheiry. Theodor Herzl and the Armenian question, «Journal of Palestine Studies», vol. VII, N 1, Autumn, Beirut, 1977, p. 22-24; Теодор Герцль и армянский вопрос. Научно-информационнный бюлетень сектора научной информации по общественным наукам, АН Армянской ССР, N 7 (39). Ереван, 1979, с. 34; Джонсон П. Указ. соч., с. 455.

[2] Տե՛ս Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք առաջին, Ե., 1982, էջ 231:

[3] Արմին Վամբերի՝ Բուդապեշտի համալսարանի պրոֆեսոր, հետևողական հայատյաց, անգլիական Ֆորին օֆիսի գործակալ: Նա հավաստիացնում էր իր բրիտանական տերերին, որ «ավելի շուտ թույլ կտամ գլուխս անջատել իմ մարմնից, քան թույլ կտամ ստեղծել անջատ Հայաստան»: Տե՛ս Walkner Christopher. Armenia: The Survival of a Nation, New York, 1980, p. 145-146.

[4] Տե՛ս Եազըճեան Գ., Աբդուլ Համիդ Բ. Կարմիր սուլթանը, Բեյրութ, 1980, էջ 288:

[5] Տե՛ս Найт Э. Революционный переворот в Турции. Пер. с англ., СПб, 1914, с. 78.

[6] Սալոնիկում ապրում էր 60 հազար հրեա, 20 հազար մահմեդական, 40 հազար հույն, 20 հազար դավանափոխ հրեա (դեոնմե) և երեք հազար եվրոպացի:

[7] Տե՛ս Armstrong H.C. Gray Wolf . The Life of Kemal Ataturk. New York, 1961, p. 20; Եազըճեան Գ., Նշվ. աշխ., էջ 289:

[8] Բնայ Բրիտ (թարգմանաբար՝ «Ազատության զավակներ»), ստեղծվել է 1843թ. հոկտեմբերի 13-ին Նյու Յորքում Գերմանիայից վտարանդված հրեաների կողմից: Հիմնական նպատակը հակասեմիտիզմի դեմ պայքարն է և հրեաների շահերի պաշտպանությունը: Ներկայումս բաժանմունքներ ունի աշխարհի 40 երկրներում:

[9] Էմմանուել Կարասսո (1862-1934), հրեական ծագումով հասարակական, քաղաքական գործիչ, «Վերածնված Մակեդոնիա» մասոնական օթյակի հիմնադիր, «Միություն և առաջադիմություն» կուսակցության համախոհ, երիտթուրքերի շարժման գլխավոր ֆինանսիստ, Օսմանյան խորհրդարանի պատգամավոր: https://ru.wikipedia.org.wiki/карассоэмануил

թուրքերի գլխավոր ոգեշնչողները[1]:

Պաղեստինում հրեաներին տարածք հատկացնելու Թ. Հերցլի առաջարկությունը մերժելուց հետո սիոնիստները որոշեցին պատժել Աբդուլ Համիդին: Նրանք «Երիտասարդ Թուրքիա» մասոնական օթյակի հավատափոխ հրեաների գլխավորությամբ Թուրքիայում դեմոկրատական բարեփոխումներ իրականացնելու և երկիրը եվրոպականացնելու կեղծ կարգախոսներով 1908 թ. հուլիսին հեղափոխություն իրականացրին, ապա տապալեցին սուլթանի իշխանությունը և հռչակեցին սահմանադրական միապետություն[2]:

